

տասխան եզրակացությունների: Օրինակ, եթե հարկումից հետո զուտ շահույթի և չհարկված շահույթի հարաբերակցությունը հաջորդ տարի նվազի 0.831-ից, ապա բանկի ղեկավարները պետք է ուշադրություն դարձնեն, թե ինչպես են իրականացվում շահութահարկի գծով վճարումները և դրա կառավարումը: Եթե չհարկված շահույթի և եկամուտների հարաբերակցությունը նվազի 0.355-ից, ապա բանկը պետք է վերանայի իր ծախսերի կառավարման քաղաքականությունը, իսկ եթե եկամուտների և ակտիվների հարաբերակցությունը նվազի 0.079-ից, ապա բանկը պետք է ուշադրությունը սևեռի բանկային պորտֆելի կառավարման արդյունավետությանը: Իր հերթին բանկի սեփական կապիտալի հարաբերակցությունը պետք է պահպանվի համապատասխան սահմաններում՝ հաշվի առնելով ROE-ի և ROA-ի մեծությունները (տե՛ս աղյուսակ 1):

Այստեղից հետևություն, որ յուրաքանչյուր առևտրային բանկի ֆինանսական գործունեությունը գնահատելու համար կարող ենք հիմնվել նաև ROE-ի, ROA-ի և բանկի մուլտիպլիկատորի փոխադարձ կապը պայմանավորող երկգործոն ռեգրեսիոն մոդելի վրա: Միաժամանակ շահութաբերության գործոնային վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս ենթադրություններ անելու բանկերի առջև եկամուտներ ստանալու ժամանակ ծագող խնդիրների մասին և հուշում է բանկի ղեկավարությանը այն ուղիների մասին, որոնց միջոցով հնարավոր է մեծացնել առևտրային բանկերի շահութաբերությունը:

## ԱՆՆԱ ԲԱՅԱՂՅԱՆ

ՀՊԱՀ դասախոս

### ՏՈԿՈՍԱՂՐՈՒՅՔԻ ՍՊՐԵՂԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՇԱՅՈՒՅԹԻ ՎՐԱ

ՀՀ առևտրային բանկերի գործունեության արդյունքում ստացված ընդհանուր եկամուտներում և ծախսերում գերակշիռ բաժինը համապատասխանաբար պատկանում է տոկոսային եկամուտներին ու տոկոսային ծախսերին: Ուստի բանկային շահույթի վերլուծության ժամանակ կարևոր նշանակություն ունեն զուտ տոկոսային եկամտի մեծությունը և դրան առընթեր տոկոսային սպրեդի գնահատումն ու վերջինիս ազդեցությունը բանկային շահույթի վրա, քանի որ զուտ տոկոսային եկամուտը սերտ կապի մեջ է գտնվում բանկային տոկոսադրույթի մեծության հետ:

Յուրաքանչյուր երկրի ֆինանսական շուկայում ձևավորվող բանկային տոկոսադրույթի վրա ազդող գործոնները կարելի է ընդհանուր առմամբ բաժանել երկու խմբի: Առաջին խմբին պատկանում են երկրի մակրոտնտեսական իրավիճակից բխող այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ սղաճը, պետական բյուջեի դեֆիցիտը, ընդհանուր ինվեստիցիաների և ընդհանուր խնայողությունների հարաբերակցությունը, ՀՆԱ-ի աճը, ՀՀ Կենտրոնական բանկի (ԿԲ) վերաֆինանսավորման տոկոսադրույթի մակարդակը և այլն: Երկրորդ խումբ գործոններն ունեն միկրոմակարդակի բնույթ և իրենց էությամբ բխում են ֆինանսական համակարգի դրսևորման արդյունավետությունից ու իրենց արտացոլումն են գտնում տոկոսադրույթների սպրեդում, որը բացարձակ առումով բանկերի կողմից տեղաբաշխվող և ներգրավվող միջոցների տոկոսադրույթների տարբերությունն է: Վերլուծությունները ցույց են տալիս, որ, ի տարբերություն զարգացած տնտեսություն ունեցող երկրների, անցումային տնտեսություն վարող երկրներում, ինչպիսին նաև ՀՀ-ն է, տոկոսային սպրեդն ունի անհամեմատ բարձր մակարդակ, որի հիմնական պատճառներից են բանկային մրցակցության ոչ բավարար աստիճանը, բարձր շուկայական ռիսկը, բնակչության անվստահությունը բանկային համակարգի նկատմամբ և այլն:

Տոկոսադրույթի սպրեդի մեծությունն ունի տնտեսական երկակի նշանակություն: Այսպես,



մի կողմից ձևավորված մեծ սպրեդը մեծացնում է բանկերի շահութաբերությունը և նպաստում բանկային համակարգի բաժնետիրական կապիտալի ավելացմանը՝ դրանով իսկ նվազեցնելով բանկերի սնանկացման հավանականությունը, իսկ մյուս կողմից էլ սպրեդի բարձր մակարդակը բացասական ազդեցություն է ունենում տնտեսությունում ձևավորված ազատ ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման, հետևաբար նաև ընդհանուր ինվեստիցիաների և տնտեսական աճի վրա:

Տոկոսադրույքների սպրեդի վերլուծության համար տեղեկատվական աղբյուր են բանկերի ֆինանսական հաշվետվության հետևյալ ձևերը, այդ թվում՝

- համախմբված (կոնսոլիդացված) հաշվապահական հաշվեկշիռը,
- բանկի եկամուտների և ծախսերի կամ ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

Ըստ առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվության՝ զուտ շահույթը մինչև հարկվելը արտահայտվում է հետևյալ բանաձևով<sup>11</sup>.

$$(ՁԸ)_{\text{ձ.հ}} = (\text{Ե}_{\text{տ}} + \text{Ե}_{\text{ն.տ}}) - (\text{Ծ}_{\text{տ}} + \text{Ծ}_{\text{ն.տ}}) - U, \quad (1)$$

որտեղ՝

$(\text{ՁԸ})_{\text{ձ.հ}}$ -ն բանկերի զուտ շահույթն է մինչև հարկվելը,

$\text{Ե}_{\text{տ}}$ -ն բանկերի տոկոսային եկամուտներն են,

$\text{Ե}_{\text{ն.տ}}$ -ն բանկերի ոչ տոկոսային եկամուտներն են,

$\text{Ծ}_{\text{տ}}$ -ն բանկերի տոկոսային ծախսերն են,

$\text{Ծ}_{\text{ն.տ}}$ -ն բանկերի ոչ տոկոսային ծախսերն են,

$U$ -ն զուտ մասհանումներն են վարկերի, արժեթղթերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստներին:

Վերը նշված (1) հավասարման մեջ պարամետրերի որոշակի տեղափոխությունից հետո կստանանք զուտ տոկոսային եկամուտն  $(\text{Ե}_{\text{զ.տ}})$  արտահայտող հետևյալ բանաձևը՝

$$\text{Ե}_{\text{զ.տ}} = \text{Ե}_{\text{տ}} - \text{Ծ}_{\text{տ}} = \text{Ծ}_{\text{ն.տ}} + U + (\text{ՁԸ})_{\text{ձ.հ}} - \text{Ե}_{\text{ն.տ}} \quad (2)$$

Իր հերթին տոկոսադրույքների սպրեդը ( $S_{\text{սպ.}}$ ) հարաբերական առումով արտահայտող բանաձևը դուրս բերելու համար (2) հավասարման աջ մասում ներառված համապատասխան պարամետրերը բաժանելով տարվա կտրվածքով դեպոզիտների միջին ( $\bar{V}$ ), վարկերի միջին ( $\bar{U}$ ) ու ակտիվների միջին ( $\bar{A}$ ) մեծությունների վրա՝ կստանանք՝

$$S_{\text{սպ.}} = \frac{\text{Ե}_{\text{տ}}}{\bar{V}} \times \frac{\bar{V}}{\bar{A}} - \frac{\text{Ծ}_{\text{տ}}}{\bar{A}} = \frac{\text{Ծ}_{\text{ն.տ}}}{\bar{A}} + \frac{U}{\bar{A}} + \frac{(\text{ՁԸ})_{\text{ձ.հ}}}{\bar{U}} \times \frac{\bar{U}}{\bar{A}} - \frac{\text{Ե}_{\text{ն.տ}}}{\bar{A}} \quad (3)$$

որտեղ  $(\text{ՁԸ})_{\text{ձ.հ}}/\bar{U}$  հարաբերակցությունն ընդհանուր ակտիվների շահութաբերությունն է (ROA):

Օգտվելով այն հանգամանքից, որ տոկոսային եկամուտը համարժեք է տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքների և այդ վարկերի ընդհանուր գումարի արտադրյալին, իր հերթին տոկոսային ծախսը համարժեք է ներգրավված դեպոզիտների միջին տոկոսադրույքների և այդ դեպոզիտների ընդհանուր գումարի արտադրյալին, իսկ վարկերի և դեպոզիտների հարաբերակցությունը հավասար է մեկ հանած պարտադիր պահուստավորման նորմատիվը, ապա որոշակի ձևափոխություններից հետո կստանանք տոկոսադրույքների սպրեդը արտահայտող հետևյալ հավասարումը՝

$$S_{\text{սպ.}} = \frac{\text{Ե}_{\text{տ}}}{\bar{V}} - \frac{\text{Ծ}_{\text{տ}}}{\bar{A}} = S_{\text{սպ.}} \times \frac{\text{Ե}_{\text{տ}}}{\bar{V}} + \frac{\text{Ծ}_{\text{ն.տ}}}{\bar{A}} + \frac{U}{\bar{A}} + \text{ROA} \times \frac{\bar{U}}{\bar{A}} - \frac{\text{Ե}_{\text{ն.տ}}}{\bar{A}} + \frac{\varepsilon}{\bar{A}} \quad (4)$$

<sup>11</sup> Джозеф Ф. Синки, мл. Управление финансами в коммерческих банках. М., 1994, с. 106.



որտեղ՝

$\mathcal{L}_{\text{պ.պ}}$ -ն պարտադիր պահուստավորման նորմատիվն է,  
ROA-ն ընդհանուր ակտիվների շահութաբերությունն է,

$$\overline{\mathcal{L}} / \overline{\mathcal{A}} = (1 - \mathcal{L}_{\text{պ.պ}}),$$

$\mathcal{E}$ -ն մնացորդային մեծությունն է:

Մնացորդային մեծությունը ( $\mathcal{E}$ ) առաջանում է այն պատճառով, որ հաշվարկներ կատարելու ընթացքում օգտվում ենք առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվության ու հաշվեկշռի տվյալներից, ինչպես նաև այն պարզ ենթադրությունից, որ վարկերի և դեպոզիտների միջին մեծությունների հարաբերակցությունը հավասար է մեկ հանած պարտադիր պահուստավորման նորմատիվը: Ասվածն ավելի արտահայտիչ դարձնելու համար Հայաստանի Հանրապետությունում գործող 21 առևտրային բանկերի օրինակով կատարենք տոկոսային սպրեդի գործոնային վերլուծություն: Տոկոսադրույքի սպրեդը, ըստ վերոնշյալ (4) հավասարման բաղադրատարրերի, բացարձակ առումով բերված է աղյուսակ 1-ում, հարաբերական առումով՝ աղյուսակ 2-ում, իսկ յուրաքանչյուր բաղադրատարրի հարաբերակցությունը կամ տեսակարար կշիռը սպրեդում բերված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 1-ում բերված տվյալներից պարզվում է, որ առևտրային բանկերի ամենամեծ տոկոսային սպրեդը եղել է 2004թ., որը կազմել է 14.0%, իսկ 2001-2007թթ. ընթացքում՝ միջինը 11.6%: Չնայած պետք է նշել, որ տարեցտարի աճել են ինչպես տրամադրված վարկերը, այնպես էլ ստացված տոկոսային եկամուտները, որոնք համապատասխանաբար 2007թ. կազմել են 126.2 և 60.4 մլրդ դրամ: Նման աճման միտում են ունեցել նաև տարբեր հաճախորդներից ներգրավված ինչպես դեպոզիտները, այնպես էլ տոկոսային ծախսերը: Հատկապես վերջին տարվա առումով տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի բացարձակ շեղումը կազմել է 42.8 մլրդ դրամ (60.4 – 18.2), որը զուտ տոկոսային եկամուտն է:

Առևտրային բանկերի համար կարևորվում է ակտիվների շահութաբերությունը (ROA), որը, չնայած 2001թ. վնասաբերությանը՝ -1.74% ( $\frac{-4.1}{236.3} \cdot 100\%$ ), հաջորդ տարիներին ապահովել է

շահութաբերություն և աճման միտում և 2004թ. կազմել է 4.72% ( $\frac{17.2}{363.6} \cdot 100\%$ ), չնայած 2006թ.

այն նվազել է՝ հասնելով 3.2%-ի ( $\frac{17.0}{524.6} \cdot 100\%$ ):



Տնկրատագրությունների սպրեդը և ազդող գործոնները բացարձակ առումով (նկրդ դրամ)<sup>1/2</sup>

Ցուցանիշների անվանումը	Տարիները							Միջինը ըստ բաղադրատարրերի
	2001	2002	2003	2004	2005	2006	2007	
$\sigma_{\text{տ}}/\bar{U}$	$\frac{35.1}{122.0}$	$\frac{18.7}{101.1}$	$\frac{22.2}{122.3}$	$\frac{27.0}{147.0}$	$\frac{32.9}{188.5}$	$\frac{42.9}{243.4}$	$\frac{60.4}{426.2}$	$\frac{34.2}{192.9}$
$\sigma_{\text{տ}}/\bar{\Gamma}$	$\frac{18.4}{92.0}$	$\frac{7.6}{123.0}$	$\frac{7.4}{141.1}$	$\frac{8.3}{186.5}$	$\frac{10.3}{266.3}$	$\frac{12.4}{304.3}$	$\frac{18.2}{413.2}$	$\frac{12.4}{204.9}$
Սպրեդ, %	8.8	12.3	13.1	14.0	13.6	13.5	9.8	11.6
$\sigma_{\text{պ.պ}} \times \sigma_{\text{տ}}/\bar{U}$	$\frac{0.08 \times 35.1}{122.0}$	$\frac{0.08 \times 18.7}{101.1}$	$\frac{0.08 \times 22.4}{122.3}$	$\frac{0.08 \times 27.0}{147.0}$	$\frac{0.08 \times 32.9}{188.5}$	$\frac{0.08 \times 42.9}{243.4}$	$\frac{0.08 \times 60.4}{426.2}$	$\frac{2.736}{192.9}$
$\sigma_{\text{ն.տ}}/\bar{\Gamma}$	$\frac{15.2}{92.0}$	$\frac{14.3}{123.0}$	$\frac{16.6}{141.1}$	$\frac{20.0}{186.5}$	$\frac{27.3}{266.3}$	$\frac{29.2}{304.3}$	$\frac{39.3}{413.2}$	$\frac{19.3}{204.9}$
$U/\bar{\Gamma}$	$\frac{4.5}{92.0}$	$\frac{2.8}{123.0}$	$\frac{3.0}{141.1}$	$\frac{3.8}{186.5}$	$\frac{4.3}{266.3}$	$\frac{4.7}{304.3}$	$\frac{6.4}{413.2}$	$\frac{4.2}{204.9}$
$ROA \times \bar{U}/\bar{\Gamma}$	$\frac{-4.1}{236.3} \times \frac{236.3}{92.0}$	$\frac{4.8}{228.6} \times \frac{228.6}{123.0}$	$\frac{6.5}{282.2} \times \frac{282.2}{141.1}$	$\frac{17.2}{363.6} \times \frac{363.6}{186.5}$	$\frac{12.2}{440.8} \times \frac{440.8}{266.3}$	$\frac{17.0}{524.6} \times \frac{524.6}{304.3}$	$\frac{21.1}{764.5} \times \frac{764.5}{413.2}$	$\frac{10.7}{405.8} \times \frac{405.8}{204.9}$
$\sigma_{\text{ն.տ}}/\bar{\Gamma}$	$\frac{6.5}{92.0}$	$\frac{10.9}{123.0}$	$\frac{13.1}{141.1}$	$\frac{15.2}{186.5}$	$\frac{22.1}{266.3}$	$\frac{21.8}{304.3}$	$\frac{27.7}{413.2}$	$\frac{16.7}{204.9}$

Ծանոթագրություն՝

ROA	Միջինը							
	2001	2002	2003	2004	2005	2006	2007	
$\bar{U}/\bar{\Gamma}$	$\frac{-4.1}{236.3}$	$\frac{4.8}{228.6}$	$\frac{6.5}{282.2}$	$\frac{17.2}{363.6}$	$\frac{12.2}{440.8}$	$\frac{17.0}{524.6}$	$\frac{21.1}{764.5}$	$\frac{10.7}{405.8}$
	$\frac{236.3}{92.0}$	$\frac{228.6}{123.0}$	$\frac{282.2}{141.1}$	$\frac{363.6}{186.5}$	$\frac{440.8}{266.3}$	$\frac{524.6}{304.3}$	$\frac{764.5}{413.2}$	$\frac{405.8}{204.9}$

<sup>1</sup> ՀՀ առևտրային բանկերի՝ 2001-2007թթ. տարեկան հաշվետվությունները:



Տոկոսադրույքների սպրեդը և ազդող գործոնները հարաբերական առումով, %

Ցուցանիշների անվանումը	Տարիները							Միջինը
	2001	2002	2003	2004	2005	2006	2007	
$\overline{C_{\text{տ}}}/\overline{C}$	28.8	18.5	18.3	18.4	17.5	17.6	14.2	17.7
$\overline{D_{\text{տ}}}/\overline{D}$	20.0	6.2	5.2	4.4	3.9	4.1	4.4	6.1
Սպրեդ, %	8.8	12.3	13.1	14.0	13.6	13.5	9.8	11.6
$\overline{C_{\text{պ.պ}}}/\overline{C_{\text{տ}}}/\overline{C}$	2.30	1.48	1.46	1.47	1.40	1.41	1.15	1.42
$\overline{D_{\text{ն.տ}}}/\overline{D}$	16.5	11.6	11.8	10.7	10.3	9.6	9.5	9.4
$\overline{U}/\overline{D}$	4.9	2.3	2.1	2.0	1.6	1.5	1.5	2.0
$\overline{ROA\Delta U}/\overline{D}$	-4.4	3.9	4.6	9.2	4.6	5.5	5.2	5.2
$\overline{C_{\text{ն.տ}}}/\overline{D}$	7.1	8.9	9.3	8.2	8.3	7.2	6.7	8.2
Մնացորդ-ային(Ե)	-3.4	1.9	2.4	-1.2	4.0	2.7	-0.9	1.8

Ծանոթագրություն՝

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	Միջինը
ROA	-0.017	0.021	0.023	0.047	0.028	0.032	0.028	0.026
$\overline{U}/\overline{D}$	256.8	185.9	200.0	195.0	165.5	172.4	185.0	198.0

Տոկոսադրույքի սպրեդում բաղադրիչների տեսակարար կշիռները, %

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	Միջինը
Սպրեդ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
$\overline{C_{\text{պ.պ}}}/\overline{C_{\text{տ}}}/\overline{C}$	26.1	12.2	11.2	10.6	10.3	10.4	11.8	12.5
$\overline{D_{\text{ն.տ}}}/\overline{D}$	187.5	94.3	90.2	76.5	75.7	71.1	96.9	88.5
$\overline{U}/\overline{D}$	55.7	18.7	16.1	14.3	11.8	11.1	15.4	19.5
$\overline{ROA\Delta U}/\overline{D}$	-50.0	31.7	35.2	65.6	93.8	40.7	53.2	45.0
$\overline{C_{\text{ն.տ}}}/\overline{D}$	80.7	72.3	71.0	58.6	61.0	53.3	68.2	77.0
Մնացորդ(Ե)	-38.6	15.4	18.3	-8.6	29.4	20.0	-9.1	11.5

\*Աղյուսակներում բերված հաշվարկները կատարված են հեղինակի կողմից:

Միաժամանակ հիմք ընդունելով (4) բանաձևը և աղյուսակ 2-ի հաշվարկային տվյալները՝ կարող ենք գալ այն հետևության, որ տոկոսադրույքի սպրեդի 11.6 տոկոսից միջին հաշվով 1.42 տոկոսը բաժին է ընկնում  $\overline{C_{\text{պ.պ}}}/\overline{C_{\text{տ}}}/\overline{C}$ -ում պարտադիր պահուստավորման արդյունքում բանկերի կատարած ծախսերին՝  $\overline{C_{\text{պ.պ}}}/\overline{C_{\text{տ}}}/\overline{C}$  և 9.4%-ը, ոչ տոկոսային ծախսերին՝  $\overline{D_{\text{ն.տ}}}/\overline{D}$  (աշխատավարձի, հիմնական միջոցների ամորտիզացիայի, գովազդի, տույժերի և տուգանքների գծով ծախսեր), ինչպես նաև հնարավոր կորուստների պահուստահիմնադրամներին հատկացումներ՝  $\overline{U}/\overline{D}$  հանրագումարին 2.0%, ինչը զարգացած երկրների բանկերի համապատասխան ցուցանիշների համեմատությամբ բավականին բարձր է: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ սպրեդի վրա



դրական ազդեցություն է գործում բանկերի կողմից ստացվող ոչ տոկոսային եկամուտների՝  $\frac{C_{n,m}}{\sqrt{1}}$  (մատուցված ծառայությունների դիմաց ստացված եկամուտներ, արտարժույթային գործառնություններից ստացված եկամուտներ, վերագնահատումից ստացված գուտ եկամուտներ, բանկի շենքի վարձակալությունից ստացված եկամուտներ և այլն) բարձր մակարդակը (8.2 տոկոս):

Աղյուսակ 3-ի հաշվարկները կատարված են 2-րդ աղյուսակի ելակետային տվյալների հիման վրա: Այսպես, 2007թ. համար որպես բազա համարվել է 9,8 տոկոսային սպրեդը, և որի նկատմամբ էլ հաշվարկվել են նրանում ներառված բաղադրիչները: Արդյունքում պարզվել է, որ սպրեդի 100%-ում  $ROA \frac{\bar{U}}{\sqrt{1}}$  հարաբերակցությունը կազմել է 53.2%, իսկ մնացորդային (Ե) մեծությունը՝ -9.1%, որը հաշվարկվում է՝ ելնելով աղյուսակ 3-ի տվյալներից և (4) բանաձևից:

Եթե ընդհանրացնելու լինենք, ապա պետք է նշել այն կարևոր իրողությունը, որ ՀՀ-ում ձևավորված բանկային տոկոսադրույթի սպրեդի մակարդակի վրա իր ազդեցությունն ունի նաև բանկային համակարգում տիրող մրցակցության աստիճանը, քանի որ խոշոր կամ, այլ կերպ, իշխող բանկերի առկայությունը և նրանց կողմից ավելի բարձր եկամուտների ստացումը ուղղակիորեն արտացոլվում է տոկոսադրույթների սպրեդում:

## ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՏԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Զոբանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

## ԱՐՏԱՋԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԶԱՐԿԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՈՐՊԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Տնտեսական աճի բարձր տեմպը ենթադրում է արտահանման ծավալների ավելացում և մուտք դեպի արտաքին շուկաներ: Արտահանման ծավալների ավելացումը նպաստում է ոչ միայն տնտեսական զարգացմանը և զբաղվածության աճին, այլև համաշխարհային ինտեգրմանը, երկրի միջազգային հեղինակության բարձրացմանն ու ամրապնդմանը, մշակութային և տեխնոլոգիական զարգացմանը, ներքին կարողությունների աճին:

20-րդ դարի վերջում աճի առավել բարձր տեմպեր նկատվեցին ասիական նոր արդյունաբերական երկրներում: ՀՆԱ-ի աճի միջին տարեկան տեմպը 1970-2006թթ. կազմում էր՝ Հյուսիսային Կորեայում - 7.37%, Սինգապուրում - 6.98%, Թայվանում - 6.51%, Հոնկոնգում - 5.63%, Թաիլանդում - 4.96%<sup>1</sup>: Միևնույն ժամանակ դիտվում էր հստակ կախվածություն բաց տնտեսության մակարդակի, արտահանման նկատմամբ առևտրային քաղաքականության դիրքորոշման և արագ աճի ու զարգացման փուլերի միջև:

Շատ հետազոտողներ<sup>2</sup> հակված են ասիական երկրներում դիտվող արտահանման խթանման քաղաքականության հաջողությունը բնութագրել իրենց ազգային տնտեսությունների բնութագրիչներով՝

- զգույշ և մտածված մակրոտնտեսական քաղաքականությամբ (բյուջետային խելամիտ դեֆիցիտի, ինֆլյացիայի տեմպի պահպանում),
- քաղաքական կայունությամբ և բազային սեկտորներում հուսալի ենթակառուցվածքով,
- պրոֆեսիոնալ բյուրոկրատական ապարատի առկայությամբ,

<sup>1</sup> Radelet S. Manufactured Exports, Export platforms, and Economic Growth / Harvard Institute for international Development. Harvard University. 1999.

<sup>2</sup> The East Asian Miracle: Economic Growth and Public Policy / The World Bank. 1993; Frankel J., Romer D. Does Trade Cause Growth? // American Economic Review. 1999. Vol 89, No 3 (June).